Առարկություններ

ՀՀ վերահսկիչ պալատի 2016թ. տարեկան հաշվետվության վերաբերյալ

ԿԵՏ 2.11

<u>Հանգստի ապահովման ծառայության բաղադրիչի վերաբերյալ.</u>

Սոցիալական փաթեթի հանգստի ապահովման բաղադրիչի բարելավման ու արդյունավետության բարձրացման նպատակով՝ հնարավոր չարաշահումների կանխարգելման ու վերացման գործընթացի առավել արդյունավետությունն ապահովելու ուղղությամբ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի կողմից ՀՀ կառավարություն է ներկայացվել առաջարկությունների փաթեթ, որում մասնավորապես առաջարկվել է.

1. Ներդնել սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության շրջանակներում զբոսաշրջային փաթեթների և առանձին հյուրանոցային ծառայությունների ամրագրման և հաշվետվական էլեկտրոնային համակարգ, ինչը հնարավորություն կտա պարզեցնել սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության մեջ ընդգրկված զբոսաշրջային օպերատորների, ծառայություններ մատուցող այլ անձանց (այդ թվում՝ հյուրանոցային ծառայություններ մատուցող անձանց) գործառույթները՝ շահառուների համար առավել մատչելի դարձնելով ծառայությունների մատուցումը: Համակարգը հնարավորություն կտա նաև սոցիալական փաթեթի հանգստի ապահովման բաղադրիչը դարձնել առավել թափանցիկ և վերահսկելի՝ չխոչընդոտելով մասնավոր հատվածի բնականոն գործունեությունը: Այս դեպքում կարիք չի լինի նաև զբոսաշրջային օպերատորների կողմից եռամսյակային հաշվետվությունների ներկայացման, քանի որ համակարգում առկա կլինի

ամենօրյա տեղեկատվություն: Համակարգի գործունեության և պահպանման ֆինանսավորումն առաջարկվում է իրականացնել սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության մեջ ընդգրկված զբոսաշրջային օպերատորների և հյուրանոցային ծառայություններ մատուցող անձանց ամսական վճարների հաշվին: Համակարգի ձևավորման և ներդրման համար պետական բյուջեից ֆինանսավորում չի պահանջվում:

Մինչ այդ, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2016թ. հոկտեմբերի 31-ի «ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013թ. մարտի 19-ի N 170-Ն հրամանում (այսուհետ՝ Հրաման) փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1158-Ն հրամանով սահմանվել է զբոսաշրջային օպերատորների կողմից կնքված, իրացված, վաղաժամկետ դադարած, չկատարված պայմանագրերի և սպառողների կողմից պայմանագրով նախատեսված ծառայություններից չօգտվելու դեպքերի վերաբերյալ եռամսյակային տեղեկատվությունը բացառապես էլեկտրոնային եղանակով ներկայացնելու կարգ:

2. Հրամանում կատարել փոփոխություն՝ սահմանելով սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության մեջ ընդգրկված զբոսաշրջային օպերատորների և սոցիալական փաթեթի շահառուների միջև կնքվող պայմանագրի օրինակելի ձևը, ինչպես նաև զբոսաշրջային օպերատորների և հյուրանոցային ծառայություններ մատուցող անձանց միջև կնքվող պայմանագրի օրինակելի ձևը:
3. Հրամանով սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության մեջ ընդգրկվող և արդեն հաշվառված զբոսաշրջային օպերատորների նկատմամբ սահմանել պահանջ, բացի հյուրանոցային ծառայություններ մատուցող անձանց հետ կնքված պայմանագրի պատճենի, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն ներկայացնել նաև հյուրանոցային տնտեսության օբյեկտների վերաբերյալ համապատասխան

տեղեկատվություն (գտնվելու վայրի, անվանման, համարների ու ննջատեղերի քանակի և այլն)՝ հաստատված հյուրանոցային ծառայություն մատուցող անձի կողմից, որի ձևը կսահմանվի Հրամանով:

4. Հրամանում կատարել փոփոխություն՝ սահմանելով, որ զբոսաշրջային օպերատորը հաշվառումից և ցանկից կարող է հանվել մեկ ֆինանսական տարվա ընթացքում մեկից ավելի անգամ սպառողի կամ ծառայություն մատուցող անձանց հետ կնքված պայմանագիրը խախտելու դեպքում, եթե խախտման փաստը սահմանված կարգով ապացուցված է:
5. Պարբերական փոխանցումները (ամսական 6000 դրամ) փոխարինել միանվագ փոխանցմամբ հետևյալ կարգով՝

   ա) միանվագ 72000 ՀՀ դրամը սոցիալական փաթեթի շահառուի հաշվեհամարին փոխանցել ըստ հայտի պայմանագրով նախատեսված ծառայություններից օգտվելուց մինչև 5 աշխատանքային օր առաջ կամ ծառայություններից օգտվելուց հետո,

   բ) մինչև տարեվերջ սոցիալական փաթեթի ծառայություններից չօգտվելու դեպքում միանվագ 72000 ՀՀ դրամ փոխանցումը կատարել սոցիալական փաթեթի շահառուների հաշվեհամարներին ընթացիկ տարվա դեկտեմբեր ամսին:

   2015թ. ընթացքում սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության շրջանակներում կնքված պայմանագրերի ծավալը կազմել է շուրջ 6.8 մլրդ ՀՀ դրամ (ինչն ընդհանուր ծառայությունների մեջ կազմում է 78%), որի 9.71%-ը (շուրջ 660 մլն ՀՀ դրամ)՝ 1-ին եռամսյակի, 29.61%-ը (շուրջ 2 մլրդ ՀՀ դրամ)՝ 2-րդ եռամսյակի, 40.86%-ը (շուրջ 2.8 մլրդ ՀՀ դրամ)՝ 3-րդ եռամսյակի, իսկ 19.82%-ը (շուրջ 1.35 մլրդ ՀՀ դրամ)՝ 4-րդ եռամսյակի ընթացքում:

   2015թ. ընթացքում սոցիալական փաթեթի մեջ մտնող ծառայությունների (ուսման վճար, հանգիստ, հիփոթեքային վարկի ամսական վճարի մարում,

առողջության ապահովագրություն) ձեռք բերման համար ծախսվել է շուրջ 8.7 մլրդ ՀՀ դրամ:

Վերլուծելով վերոգրյալ տվյալները՝ կարող ենք եզրակացնել, որ սոցիալական փաթեթի մեջ մտնող ծառայությունների ձեռք բերման համար փոխանցված գումարների շուրջ 900 մլն ՀՀ դրամը բաժին է ընկել 1-ին եռամսյակին, շուրջ 2.5 մլրդ ՀՀ դրամը՝ 2-րդ եռամսյակին, շուրջ 3.5 մլրդ ՀՀ դրամը՝ 3-րդ եռամսյակին, իսկ շուրջ 1.8 մլրդ ՀՀ դրամը՝ 4-րդ եռամսյակին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ամեն ամիս սոցիալական փաթեթի շուրջ 150 հազ. շահառուներին փոխանցվում է ամսական շուրջ 900 մլն դրամ (2.7 մլրդ եռամսյակի ընթացքում)՝ կարծում ենք, որ ըստ հայտերի միանվագ փոխանցումը հնարավորություն կտա ոչ միայն նվազեցնել բյուջեի ծանրաբեռնվածությունը, հատկապես 1-ին և 2-րդ եռամսյակների ընթացքում, այլև լուծել սոցիալական փաթեթի գումարների փոխանցումների ուշացումների խնդիրը և կնպաստի վճարման համակարգի բարելավմանը:

6. Կառավարության որոշմամբ սահմանել պահանջ, ըստ որի առանձին հյուրանոցային ծառայություն իրացնելիս, հանդես գալով հյուրանոցային ծառայություն մատուցող անձի անունից, սոցիալական փաթեթի գումարները շահառուի սոցիալական փաթեթի հաշվեհամարից փոխանցվելու են բացառապես հյուրանոցային ծառայություններ մատուցող անձի հաշվեհամարին, որից զբոսաշրջային օպերատորը կստանա համապատասխան միջնորդավճար:
7. Հրամանում կատարել փոփոխություն՝ սահմանելով, որ զբոսաշրջային օպերատորների ներկայացրած հայտերը ուսումնասիրվում են համապատասխան հանձնաժողովի կողմից, որի դրական եզրակացության հիման վրա զբոսաշրջային օպերատորները ընդգրկվում են սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայություն մատուցող օպերատորների ցանկում: Հանձնաժողովը կարող է ուսումնասիրություն անցկացնել նաև

հայտում նշված գործունեության հասցեում ինչպես հայտի ուսումնասիրության ընթացքում, այնպես էլ ցանկացած ժամանակ:

8. Սոցիալական հոլովակի պատրաստում և տարածում սոցիալական փաթեթի շահառուների իրազեկվածության բարձրացման նպատակով, որի համար կպահանջվի առանձին ֆինանսավորում:

Այնուհետև ստացվել է ՀՀ վարչապետի հանձնարարական, ըստ որի ՀՀ կառավարությունը համաձայնել է ներկայացված առաջարկությունների 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերին, մասնավորապես.

1-**ին կետի առաջարկության առումով՝** հաշվետվական էլեկտրոնային համակարգը ներդնելու նպատակով հանձնարարվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ առողջապահության նախարարների և «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ տնօրենի հետ համատեղ քննարկել և ներկայացնել առաջարկություն՝ սոցիալական փաթեթի շահառուների տվյալների շտեմարանը շահագրգիռ պետական մարմինների համար հասանելի դարձնելու վերաբերյալ:

2-**րդ, 3-րդ և 4-րդ կետերի առաջարկությունների առումով՝** առաջարկվել է ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013թ. մարտի 19-ի N170-Ն հրամանում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարելու մասին նախագիծ:

ՀՀ կառավարությունը համաձայնություն չի տվել ներկայացված առաջարկների 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերին, միաժամանակ առաջարկվել է 8-րդ կետի (սոցիալական փաթեթի շահառուների իրազեկվածության բարձրացում) իրականացումն ապահովել ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և զբոսաշրջության պետական կոմիտեի հանրային իրազեկման միջոցառումների շրջանակում:

Միաժամանակ հայտնում ենք, որ ի կատարումն ՀՀ վարչապետի 2017թ. ապրիլի 7-ի N02/14.8/8784-17 հանձնարարականի՝ 2017թ. ապրիլի 13-ին ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեում կայացել է հանդիպում-քննարկում ՀՀ առողջապահության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների, «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ ներկայացուցիչների մասնակցությամբ: Հանդիպման ընթացքում քննարկվել են սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության շրջանակներում հաշվետվական էլեկտրոնային համակարգի ներդրման հետ կապված հարցեր, մասնավորապես, սոցիալական փաթեթի շահառուների տվյալների շտեմարանը շահագրգիռ պետական մարմինների համար հասանելի դարձնելու հարցը:

Արդյունքում, «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ ներկայացուցիչը հավաստիացրեց, և ձևավորվել է ընդհանուր ընկալում, որ սոցիալական փաթեթի շահառուների տվյալների շտեմարանը շահագրգիռ պետական մարմինների համար հասանելի դարձնելը հնարավոր է ՀՀ կառավարության 2015թ. N 1093-Ն որոշմամբ նախատեսված փոխգործելիության սկզբունքի հիման վրա:

ԿԵՏ 2.12

<u>«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամում պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, ինչպես նաև պետական սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ վերահսկողության արդյունքների վերաբերյալ</u>

- ***Հիմնադրամի կողմից ստեղծված ընկերություններում բաժնեմասի օտարման վերաբերյալ***

Հաշվետվության մեջ նշվում է, որ Հիմնադրամի կողմից մշտական պահպանության ենթակա փաստաթղթերը չեն պահպանվել, որպես խորհրդի բացառիկ իրավասություն՝ Հիմնադրամի գույքի տնօրինման կարգ չի հաստատվել, Հիմնադրամի բաժնեմասերի իրական /շուկայական/ արժեքների գնահատում չի կատարվել և Հիմնադրամի բաժնեմասերն օտարվել են առանց խորհրդի համապատասխան որոշումների:

Նախարարությունը գտնում է, որ Հիմնադրամի կողմից մշտական պահպանության ենթակա փաստաթղթերի պահպանման խախտում տեղի չի ունեցել, քանի որ ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 9-ի «Պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկը հաստատելու մասին» N351-Ն որոշումը չի կարող Հիմնադրամի համար հանդիսանալ որոշակի փաստաթղթերի պահպանման պարտավորություն առաջացնող իրավական հիմք: ՀՀ կառավարության վերը նշված որոշման 2-րդ կետի բ) մասի համաձայն՝ տվյալ որոշման գործողությունը չի տարածվում այլ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի գործունեության արդյունքում առաջացած փաստաթղթերի վրա, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ, իսկ «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի շրջանակում նման կարգավորում առկա չէ: Նշենք նաև, որ վերոնշյալ որոշմամբ հիշատակված պահպանման ենթակա փաստաթղթերի այն տեսակները, որոնք առաջացել են Հիմնադրամի գործունեության ընթացքում, համաձայն նույն իրավական ակտի, ենթակա են պահպանության 3-5 տարի, ինչը կատարվել է Հիմնադրամի կողմից:

Ինչ վերաբերում է առանց խորհրդի կողմից ընդունված որոշման բաժնետոմսերի օտարմանը, ապա հայտնում ենք, որ Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշումներով հավանություն է տրվել կանոնադրական կապիտալում 50% մասնակցությամբ 30 մլն ՀՀ դրամ կանոնադրական կապիտալ ունեցող «Էյ-Այ-Թի» ՓԲԸ-ի ստեղծմանը և Հիմնադրամի 50% բաժնային մասնակցությամբ 30 մլն 800 հազար ՀՀ դրամ կանոնադրական կապիտալով նոր

«Սորսիո» ՓԲԸ-ի ստեղծմանը («Էյ-Այ-Թի» ՓԲԸ-ի մասով՝ 01.06.2006թ. N12 արձանագրություն և «Սորսիո» ՓԲԸ-ի մասով՝ 08.12.2005թ. N10 արձանագրություն), ինչպես նաև լիազորվել է Հիմնադրամին՝ անվանական արժեքով օտարել Հիմնադրամին պատկանող «Էյ-Այ-Թի» ՓԲԸ-ի բաժնետոմսերը և բանակցություններ վարել «Սորսիո» ՓԲԸ-ում Հիմնադրամի մասնակցությունը ոչ պակաս 20% հավելաճով օտարելու համար («Էյ-Այ-Թի» ՓԲԸ-ի մասով՝ 16.04.2007թ., N15 արձանագրություն և «Սորսիո» ՓԲԸ-ի մասով՝ 01.06.2006թ. N12 արձանագրություն):

«Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հիմնադրամի գույքի օտարումը չի գտնվում հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի իրավասության ներքո: Օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի 1) կետի համաձայն՝ կառավարիչը (տնօրենը) տնօրինում է հիմնադրամի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում հիմնադրամի անունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերության համաձայն՝ տնօրինման իրավունքը գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Հիմնադրամի գույքի՝ այդ թվում և բաժնետոմսերի օտարման իրավունքը «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի 1) կետի ուժով հանդիսանում է տնօրենի իրավասությունը, հոգաբարձուների խորհուրդը սահմանում է գույքի տնօրինման կարգը: Հիմնադրամի գույքի տնօրինման կարգը հաստատվել է կոնկրետ գործարքների մասով: Նշենք նաև, որ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքը չի սահմանում Հիմնադրամի գույքի օտարման կարգի պարտադիր ձևաչափ և/կամ բնութագիր: Նման պայմաններում կարծում ենք, որ բաժնետոմսերի օտարման վերաբերյալ խորհրդի որոշումները հանդիսանում են կոնկրետ գույքի (բաժնետոմսերի) օտարման կարգեր:

Ինչ վերաբերվում է Հաշվետվության մեջ առկա «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությանը կատարված հղմանը, ապա նախարարությունը գտնում է, որ տվյալ կետով սահմանված կարգավորումները կիրառելի չեն քննարկման առարկա

հանդիսացող իրավահարաբերությունների նկատմամբ, քանի որ տվյալ դեպքում չի խոսվում «Սորսիո» ՓԲԸ-ին և «Էյ-Այ-Թի» ՓԲԸ-ին պատկանող գույքի օտարման մասին, այլ քննարկվող իրավիճակում օտարվել են նշված կազմակերպությունների բաժնետիրոջ (Հիմնադրամի) սեփականությունը հանդիսացող գույքը՝ բաժնետոմսերը:

Անդրադառնալով Հաշվետվության մեջ նշված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 72-րդ և 1027-րդ հոդվածների հղումներին՝ նշենք, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 72-րդ հոդվածի 7-րդ, 8-րդ, 9-րդ մասերը համադրված սահմանում են տնտեսական ընկերակցություններում և ընկերություններում որպես ավանդ ներդրված դրամական գնահատում ունեցող այլ իրավունքների գնահատման կանոն, այլ ոչ թե մասնակցի պարտականություն բաժնետոմսերի պարտադիր գնահատում իրականացնելու վերաբերյալ, իսկ 1027-րդ հոդվածը սահմանում է առանց իրավաբանական անձ կազմավորելու համատեղ գործունեության պայմանագրի մասնակիցների ավանդների դրամական գնահատման կանոն: Հետևաբար գտնում ենք, որ Հիմնադրամի կողմից օտարվող գույքի՝ բաժնետոմսերի շուկայական արժեքի որոշման և դրա համար անկախ գնահատողի ծառայություններից օգտվելու, նման մասնագետի ներգրավման անհրաժեշտություն, պարտավորություն և/կամ օրենսդրական պահանջ Հիմնադրամը չուներ և չէր կրում:

- ***Հիմնադրամի կողմից ստեղծված ընկերությունների բաժնետոմսերի իրական արժեքի գնահատման և դրանց վաճառքի հավանական գնի որոշման վերաբերյալ***

Հաշվետվությամբ նշվում է, որ հիմնադրամի կողմից ստեղծված ընկերությունների բաժնետոմսերի վաճառքի ընթացքում անտեսվել են ակտիվների իրական արժեքների գնահատման մեթոդներն ու օրենսդրության պահանջները:

Նախարարությունը կարծում է, որ Հիմնադրամի կողմից իրական արժեքի գնահատման մեթոդների և օրենսդրության պահանջների անտեսում տեղի չի ունեցել, քանի որ Հաշվապահական հաշվառման 39 ստանդարտով համակարգվում են ֆինանսական ակտիվների չորս կատեգորիաներ: ՀՀ վերահսկիչ պալատի կողմից մատնանշվել է 39 միջազգային ստանդարտի՝ մինչև մարման ժամկետը մարվող ներդրումները՝ ֆիքսված կամ որոշելի վճարումներով և ֆիքսված մարման ժամկետով ֆինանսական ակտիվները, մինչդեռ Հիմնադրամին պատկանող բաժնետոմսերը դասվում են ֆինանսական ակտիվների այլ կատեգորիայի՝ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ, և Հիմնադրամն իր բաժնետոմսերը օտարել է վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների կատեգորիային համապատասխանող ընթացակարգով: Ընկերության բաժնետոմսերը «մարման ժամկետ» ունեցող չեն կարող համարվել: Այս պարագայում կատարվել է ֆինանսական ակտիվների կատեգորիայի անհամապատասխան ընտրություն, ինչի հիման վրա իրականացվող վերլուծությունները հանգեցրել են ոչ համարժեք եզրահանգման: Հետևաբար, ՀՀ հաշվապահական հաշվառման 39-րդ ստանդարտի համաձայն բաժնետոմսերի վաճառքից առաջ վերագնահատում անհրաժեշտ չէ:

- ***Հիմնադրամի կողմից տրամադրած փոխառությունների վերաբերյալ***

Հաշվետվությամբ նշվում է, որ խախտվել է «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված պահանջն այն մասին, որ հիմնադրամի սեփականությունը չի կարող օգտագործվել ի շահ հիմնադիրների, հիմնադրամի մարմինների անդամների, ինչպես նաև հիմնադրամի աշխատողների:

Հիմնադրամի ներկայացրած բացատրության համաձայն՝ Հիմնադրամի կողմից «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի խախտում տեղի չի ունեցել, քանի որ փոխառության տրամադրումը «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասի կանոնի իմաստով չի հանդիսանում գույքի օգտագործում «ի շահ...»

տնօրենի, հետևաբար «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասի սահմանափակումը կիրառելի չէ քննարկվող իրավիճակում: Այս դեպքում լիազորված անձինք հանդիսացել են ոչ թե տնօրենի կողմից, այլ Հիմնադրամի կողմից լիազորված անձինք, և վերջիններիս միջոցով կնքված գործարքների արդյունքում իրավունքներ ու պարտականություններ են առաջացել ոչ թե տնօրենի, այլ Հիմնադրամի համար՝ հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 318-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ մեկ անձի (ներկայացուցչի) կողմից ուրիշ անձի (ներկայացվողի) անունից լիազորագրի, օրենքի կամ դրա համար լիազորված պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտի վրա հիմնված լիազորությունների ուժով կնքված գործարքը քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ է ստեղծում, փոփոխում ու դադարեցնում է անմիջականորեն ներկայացվողի համար, իսկ տվյալ դեպքում ներկայացվողը Հիմնադրամն է, ոչ թե հիմնադրամի տնօրենը:

- ***Հիմնադրամին Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի գլխավոր օպերատոր ճանաչելու և գործունեություն իրականացնելու նպատակով տրամադրված գույքի և պետական աջակցության, ինչպես նաև դրանց օգտագործման վերաբերյալ***

Հաշվետվությամբ նշվում է, որ Հիմնադրամն առանց իրավական հիմքեր ունենալու 2014թ. հունվարից մինչև 2015թ. նոյեմբերն ընկած ժամանակահատվածում օգտագործել է Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի /ԳՏԿ/ անշարժ գույքը, ինչպես նաև կենտրոնի շենքում տեղակայվել և իրենց գործունեությունն են ծավալել ընդհանուր թվով 21 ընկերություններ:

Նախարարությունը կարծում է, որ Հիմնադրամի կողմից ԳՏԿ-ի անշարժ գույքի օգտագործման խախտում տեղի չի ունեցել, քանի որ «Դ-Լինկ», «Ի-Վորքս», «Դիջիթալ Փոմըգրանեթ», «Գյումրու տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն», «Գյումրու լեզուների տուն», «ՋիԷնՍի-Ալֆա», «Թայմ Փրոդաքշընն» և «ՍքայԼայն»

ընկերությունները, ինչպես նաև «Թումո» ուսումնակրթական կենտրոնը Գյումրու տեխնոլոգիական կենտրոնում (ԳՏԿ) տեղակայվել են՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության (գույքի սեփականատիրոջ) 2015թ. փետրվարի 12-ի N101-Ա որոշման Հավելված N1-ի 5-րդ կետը: Հիմնադրամը, նշված տարածքի նկատմամբ չունենալով գրանցված օգտագործման իրավունք, չէր կարող հաշվարկել և գանձել վարձավճարներ, ուստի և չէր կարող առաջանալ ՀՀ վերահսկիչ պալատի հաշվետվությամբ նշված հարկերի և այլ վճարների հաշվարկման և դրանք ՀՀ պետական բյուջե գանձման անհրաժեշտություն: Հիմնադրամի գույքային իրավունքների գրանցումից անմիջապես հետո կնքվել են պայմանագրեր ԳՏԿ տարածքում տեղակայված ընկերությունների հետ, և սկսել են հաշվարկվել ու գանձվել վարձավճարներ: Հարկ է նշել նաև, որ ՀՀ կառավարության 2016թ. հունիսի 30-ի N676-Ա որոշմամբ սահմանվել է, որ ԳՏԿ տարածքից 703.7 ք.մ. մակերեսով տարածքը 5 տարի ժամկետով անհատույց օգտագործման է հանձնվում «Սիմոնյան» կրթական հիմնադրամին («Թումո» ուսումնական կենտրոն):

- ***2014թ.-ից մինչև 2016թ. հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար դրամաշնորհային պայմանագրերով պետության կողմից Հիմնադրամին փաստացի վճարված 241548.5 հազ. դրամ գումարի հիմնավորվածության և կրկնակի վճարված գումարները ՀՀ պետական բյուջե հետ գանձելու մասին***

Նախարարությունը գտնում է, որ Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների միջոցառումներն իրականացնելու նպատակով Հիմնադրամին փաստացի վճարված գումարը հիմնավորված է, և ըստ Հիմնադրամի կողմից ներկայացված բացատրության՝ կրկնակի վճարված գումարներ առկա չեն, քանի որ նշված երկու աղբյուրներից (ՀՀ պետական բյուջե և Համաշխարհային բանկ) տեղի է ունեցել Հիմնադրամի որոշ աշխատակիցների աշխատավարձի գումարների համաֆինանսավորում, այլ ոչ թե կրկնակի վճարում: Այլ աղբյուրներից ֆինանսական

միջոցների ներգրավումն անհրաժեշտ էր, քանի որ պետական բյուջեից տրամադրված միջոցները չէին բավականացնում Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության ծրագրի ամբողջական իրականացման համար:

Հայտնում ենք նաև, որ Հիմնադրամին բոլոր վճարումներն իրականացվել են՝ հիմք ընդունելով Հիմնադրամի կողմից փաստացի կատարված աշխատանքների արդյունքների վերաբերյալ ամփոփ հաշվետվությունները: